


Հաստատված է _____
Հայաստանի Հանրապետության

գյուղատնտեսության նախարարի
2005թ. ~~հունիսի 26~~ թ.
N ~~87~~ հրամանով
Նախարար ~~Գ. Լոբյան~~



Տպագրված է
ընդամենը 5 օրինակ
Օրինակ 5----

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի
կողմից » 09 « հունիսի » 2005թ.
Գրանցման թիվ 222 210 00504
Վկայական 03Ա 068995
Պետական ռեգիստրի ղեկավար՝
Գ. Սարգսյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՏՆԱՔՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱՆԱՔՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՆՏՈՐՈՇԻՉ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպությունն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 13-ի N103-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Երևանի անասնաբուժության, անասնաբուծության քաղաքային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Շահումյանի տարածքային բաժնում 20.01.2005թ., գրանցման համարը՝ 290.210.03157, վկայական՝ 03Ա 065461), «Հանրապետական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնում 27.03.2003թ., գրանցման համարը՝ 278.210.03388, վկայական՝ 03Ա 059580), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Արմավիրի մարզային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական բաժնում 06.10.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00399, վկայական՝ 03Ա 066275), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Տավուշի մարզային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 25.10.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00421, վկայական՝ 03Ա 066297), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Արագածոտնի մարզային կենտրոն» (գրանցված է

Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 12.10.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00409, վկայական՝ 03Ա 066285), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Շիրակի մարզային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 27.10.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00422, վկայական՝ 03Ա 066298), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Սևանի տարածաշրջանային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 07.10.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00402, վկայական՝ 03Ա 066278), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Կոտայքի մարզային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 07.10.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00401, վկայական՝ 03Ա 066277), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Սյունիքի մարզային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 01.11.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00427, վկայական՝ 03Ա 066303), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Լոռու մարզային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 03.11.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00428, վկայական՝ 03Ա 066304), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Մարտունու տարածաշրջանային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 20.10.04թ., գրանցման համարը՝ 222.210.00419 , վկայական՝ 03Ա 066295), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Վայոց Ձորի մարզային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 30.07.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00367, վկայական՝ 03Ա 065353), «Անասնաբուծության, անասնաբուժական սպասարկումների, կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի անվտանգության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման ու հաշվառման Արարատի մարզային կենտրոն» (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում 11.10.2004թ., գրանցման համարը՝ 222.210.00407, վկայական՝ 03Ա 066284), պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրանց իրավահաջորդը փոխանցման ակտերին համապատասխան:

3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերին համապատասխան:

4. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, սահմանված կարգով քացված բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով և

իր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ դրոշմակնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

5. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

6. Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Կազմակերպության կանոնադրությունը նրա հիմնադիր փաստաթուղթն է:

8. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

9. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

հայերեն կրճատ՝ «ՀԱՀԱԿ» ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ "Республиканский ветеринарный противоэпизоотический и диагностический центр" государственная некоммерческая организация

ռուսերեն կրճատ՝ "РВПДЦ" ГНКО

անգլերեն լրիվ՝ "Republican veterinary antiepidemiological and diagnostic center" state non commercial organization

անգլերեն կրճատ՝ "RVADC" SNCO

10. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 375041 քաղ. Երևան, Էրեբունու փող. 12

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) կենդանիների հիվանդությունների (այդ թվում թռչունների, մուշտակամորթ զազանների, ձկների և մեղուների) լաբորատոր ախտորոշման սահմանումը.

բ) վարակիչ հիվանդություններով կամ նյութափոխանակման խախտումների և օրգանիզմի գործունեության այլ շեղումների հետ կապված հիվանդություններով հիվանդ կենդանիների, ինչպես նաև կենդանիների զանգվածային հիվանդությունների պատճառների հայտնաբերումը.

գ) կենդանական ծագում ունեցող մթերքի (միս, կաթ, ձու, մեղր, պահածոներ) և հումքի փորձաքննության կազմակերպումը.

դ) օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումը կանխելու, պետական անասնաբուժական հսկման ենթակա բեռների փոխադրումների ժամանակ անասնաբուժասանիտարական պահանջների ապահովումը.

ե) սերոմոնիտորինգի աշխատանքների կազմակերպումը, աշխատանքների ամփոփումը և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն հաշվետվություններ ներկայացնելը.

զ) շիճուկաբանական հետազոտություններ իրականացնելը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

12. Կազմակերպությունը՝

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է անասնապահությամբ զբաղվող տնտեսություններից, անասնաբուժական ծառայություններ մատուցող ֆիզիկական կամ իրավաբանական և այլ անձանցից ստացված նմուշների, կենդանիների (այդ թվում՝ թռչունների, մուշտակամորթ զազանների, ձկների, մեղուների

և այլ կենդանիների) հիվանդությունների ախտորոշման նպատակով լաբորատոր հետազոտություններ.

բ) կենդանիների անվտանգությունն ապահովելու նպատակով հետազոտում է կերերը և ջուրը.

գ) տնտեսություններին, կազմակերպություններին, տնտեսվարող սուբյեկտներին հայտնում է սահմանված կարգով հետազոտված նյութերի հետազոտությունների արդյունքները և դրանց մասին տալիս եզրակացություններ՝ համապատասխան առաջարկություններով.

դ) վտանգավոր հիվանդություններ հայտնաբերելու դեպքում որոշում է ախտորոշիչ հետազոտությունների բնույթը, ծավալն ու կարգը և ապահովում սեղմ ժամկետում դրանց իրականացումը.

ե) կենդանական ծագման մթերքների և հումքի անվտանգության ապահովման նպատակով իրականացնում է անասնաբուժասանիտարական փորձաքննություն.

զ) ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով ֆինանսավորվող անասնաբուժական, հակաանասնաճարակային աշխատանքների կազմակերպման նպատակով ստացված անասնաբուժական սարքավորումների, ախտորոշիչ միջոցների, կենսապատվաստուկների, ախտահանիչ նյութերի, շիճուկների և այլնի ընդունումը, պահպանումը, բաշխումը և տեղափոխում-հանձնումը հասցեատերերին.

է) պրոպագանդում է կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի առաջավոր փորձը:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13. Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակներն են.

ա) կենդանական ծագում ունեցող մթերքի և հումքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացումը,

բ) լաբորատոր և այլ մեթոդներով կենդանիների հիվանդությունների ախտորոշումը,

գ) բակտերիոլոգիական հետազոտությունների իրականացումը,

դ) անասնաբուժական խորհրդատվության մատուցումը,

ե) պետական պատվերում չընդգրկված գյուղատնտեսական կենդանիների վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների բուժումը

զ) վարակակիր անասնապահական օբյեկտների ախտահանում.

է) գյուղատնտեսական կենդանիների կլինիկական զննումների և հետազոտությունների իրականացումը:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

14. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝

ա) հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության.

բ) լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը.

գ) գործադիր մարմինը (տնօրենը):

15. Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի վերջնական լուծում տալու կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

16. Հիմնադրի լիազորություններն են՝

ա) կազմակերպության հիմնադրումը.

բ) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա

կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

դ) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

17. Լիազորված պետական մարմինը՝

ա) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ.

բ) ստեղծում է կազմակերպության հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ.

գ) հաստատում է կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը.

դ) ստեղծում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը.

ե) սահմանում է կազմակերպության կառավարման համակարգը.

զ) իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում դրա բնականոն գործունեությունը և կրում պատասխանատվություն դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

է) ձևավորում է կազմակերպության կառավարման մարմինները, իրականացնում նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

ը) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության գործունեության նկատմամբ.

թ) կատարում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրությունները և ցուցումները.

ժ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ժա) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս նրա գույքը օտարելու կամ վարձակալության հանձնելու համար.

ժբ) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

ժգ) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

18. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

19. Կազմակերպության տնօրենն իրեն վերսպահված լիազորության սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

20. Լիազորված պետական մարմնի ղեկավարը հիմնադրի անունից կազմակերպության տնօրենի գործառույթներ իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր:

21. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

22. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար:

23. Տնօրենի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

24. Տնօրենը պարտավոր է չկատարել վերադաս կառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

25. Տնօրենի բացակայության դեպքում, նրան պաշտոնի նշանակած մարմնի գրավոր որոշման համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

26. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ե) կատարում է աշխատանքի բաշխում տեղակալների միջև.

զ) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

է) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր.

ը) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրություններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

27. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է հիմնադրի կողմից՝ սեփականության իրավունքով նրան հանձնվող և իր գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

28. Կազմակերպությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրության, հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

29. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

30. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

31. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

32. Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է գույք:

33. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու և հանձնելու անհատույց օգտագործման:

34. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության

անունից հանձնելու վարձակալության ոչ ավելի քան մեկ տարի ժամկետով, եթե հիմնադրի կողմից այլ բան չի սահմանված:

35. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

36. Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

37. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը չի կարող հիմք հանդիսանալ այդ գույքի նկատմամբ հիմնադրի իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

38. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության կողմից օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

39. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությանը նախատեսված նպատակների իրականացման համար:

40. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԻՐ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

41. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

42. Կազմակերպությունը պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

43. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

44. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

45. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով:

46. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

47. Կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:



Барлығы 5 7 бөлік